

ՄԱՍԼՈՅ ԶԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պատմության մեջ եւ Պատմութենէն անդին Յայեր եւ Թուրքեր. Հազարամեայ Փոխյարաբերութիւն մը

Վենետիկ, Սուրբ Գեորգ Կղզի
28-30 Հոկտեմբեր 2004

Իտալիոյ մեծագոյն մշակութային Հաստատութիւններէն Վենետիկեան Ջորջոյ Չինի Հիմնարկին «Վենետիկ եւ Եւրոպա» Ուսումնաճիւղը յղացաւ եւ կազմակերպեց միջազգային գիտաժողով մը, որուն մասնակցեցան Եւրոպայէն, Միացեալ Նահանգներէն, Հայաստանէն, Իսրայելէն եւ Թուրքիայէն՝ պատմաբաններ, իմաստասերներ, իրաւաբաններ, հոգեբաններ, քաղաքագետներ, մարդու իրաւունքներու մասնագետներ: Գիտաժողովին գիտական պատասխանատուութիւնը կը վարէին՝ Պրոֆ.ներ Անտոնիոյ Ռիգոյ, Տնօրէն Չինի Հիմնարկի «Վենետիկ – Եւրոպա» Ուսումնաճիւղին, – Զ. Լեւոն Չեքիեան, Վարիչ Վենետիկի Կա Ֆոսկարի Համալսարանի Հայ Լեզուի – Գրականութեան ամբիոնին:

Գիտաժողովին նպատակն էր վերլուծել հայերու եւ թուրքերու փոխյարաբերութիւնները ուշ Միջին Դարէն սկսեալ մինչեւ արդի շրջանը, ներառեալ Հայոց ցեղասպանութեան աղետը ԺԹ. դարու սկիզբին, եւ մինչեւ մեր ժամանակաշրջանը: Ըննարկումը ընդգրկեց ընդհանուր բնոյթի նիւթեր ինչպէս նաեւ տեսական խնդիրներ [իմաստասիրական, իրաւական, պատմագրական, հոգեվերլուծական], բայց միաժամանակ ներկայացուցան պատմական յստակ եւ յատուկ դէպքեր:

Չեկուցողներն էին հանրահայտ մասնագետներ. Միացեալ Նահանգներէն՝ Թաներ Աքչամ /Միներտոթայի Համալսարան/ – Ռուբէն Ատալեան /Ամերկայի Հայկական Համագումար/, Կանադայէն Ֆրանք Չալք /Մոնրեալի Ցեղասպանութեան – Մարդկային Հետազօտութիւններու Ինստիտուտ/, Ֆրանսայէն Ռեմոն Յ. Գեորգեան /Տնօրէն Նուպարեան Գրադարանի/, Իտալիայէն Փիրալեան Սիմոնեան /Հոգեվերլուծող/, Իվ Թեռնոն /պատմաբան/, Գերմանիայէն Զերման Գոլց /Տնօրէն Լեպսիուսի դիւաններու/, Իսրայելէն Իսրայել Չառնի /Տնօրէն Երուսաղէմի Ողջակիզման – Ցեղասպանութեան Ինստիտուտի/, Թուրքիայէն՝ Մուրադ Բելգէ /Բիլգի Համալսարան/, Ֆերիաթ Ընթել /Բիլգի Համալսարան/, Հալիլ Բերքթայ /Սաբանջը Համալսարան/, Բասկըն Օրան /Անքարայի Զաղաքական Գիտութիւններու Ֆակուլտետ/, Ռազըպ Չարաքօլու /գրող – հրատարակիչ/, Հայաստանէն՝ Վլադիմիր Մարգարեան /Իրաւաբան/ – Ռուբէն Սաֆրաստեան /ՀՀԳԱ Ակադեմիայի Թրքագիտութեան անբիոնի վարիչ/, Իտալիայէն՝ Անտոնիա Արսլան /գրականագետ – գրող/, Ջամալիերոյ Բելլինջերի /Վենետիկի Համալսարան/, Մաուրոյ Բուսսանի /Թրիեստի Համալսարան/, Ալոյ Ֆերրարի /Միլանի Զաղաքագիտական Ինստիտուտ/, Ջանկլաուդիոյ Մաքիարելլա /Վենետիկի Համալսարան/, Նախկին Մշակոյթի կցորդ Ուաշինթընի, Աթենքի, Թեհրանի, Անքարայի Իտալական Դեսպանութիւններուն/, Պիեռ Պաոլոյ Փորթինարոյ /Թորինոյի Համալսարան/, – Գիտաժողովի գիտական Խորհուրդը կազմողներ՝ Անտոնիոյ Ռիգոյ – Զ. Լեւոն Չեքիեան՝ Վենետիկի Համալսարանէն:

Գիտաժողովը բաղկացաւ հինգ նստաշրջանէ, ուր քննարկուեցան հետեւեալ նիւթերը. ցեղասպանութեան գաղափարը – տիպաբանութիւնը /Փորթինարոյ, Չառնի, Չալք/, հոգեբանական անդրադարձները /Փիրալեան/, ազգաբնակչական հարցը /Գեորգեան/, դիւանական պրպտումներու վիճակը /Ատալեան/, ժխտապաշտութիւնը

/Թեռնոն/, հայ եւ թուրք յարաբերութիւնները սելջուկեան շրջանէն մինչեւ օսմանեան եւ հանրապետականը /Սաֆրաստեան/, Գերմանիոյ մեղսակցութիւնը /Գոլց/, իթթիհադական լուծումը - թուրք հանրապետական ինքնութիւնը /Աքչամ/, իրականութեան, խօսքի - թուրք մտապատկերացումի յարաբերութիւնը /Բերքթայ/, միջցեղային առընչութիւնները Անատոլիոյ մէջ սկսեալ օսմանեան շրջանէն /Չարաքօլու/, Յայերու վիրակը այսօր Թուրքիոյ մէջ /Բենթել/, »հայկական հարցը« - մարդկային իրաւունքները /Բելզե/, իրաւական պատասխանատուութեան հիմքերը /Մարգարեան/, թաքուին արմատները /Օրան/, Յայոց Եղեռնին ճանաչումը որպէս ցեղասպանութիւն եւրոպական Պետութիւններու կողմէ /Ֆերրարի/, - բազմաթիւ այլ հարցեր՝ ինչպէս Մեծ Եղեռնի տեղադրումը Ի. դարու ցեղասպանութիւններու ծիրին մէջ, յանցապարտութեան զգացումն ու բարդոյթը, Յայոց ցեղասպանութիւնը թուրք հանրային կարծիքին ներկայացնելու հնարաւոր ձեւերը, անոր կարեւորութիւնն ու տեղը Ի. դարու Եւրոպայի պատմութեան շրջածիրին մէջ, եւլն.:

Գիտաժողովի վերջաւորութեան կայացաւ կլոր սեղան մը իբրեւ աշխատանքներու ամփոփում եւ ապագայ պրպտումներու - զարգացումներու վրայ հեռանկարային սկզբնակետ:

Գիտաժողովի սկզբնական ներշնչումը կը յառաջագայէր սա գիտակցութենէն՝ որ հիմնականին մէջ հայ - թուրք յարաբերութիւնները կը գտնուին փակուղիի մը մէջ, ուր կը տիրէ ժխտումը եւ տեսակետերու հանդիպադրումը գրեթէ անկարելի կը դառնայ: Պատմաքաղաքական այս թնշուկային իրադրութեան անելէն դուրս գալու համար առաջարկուած տեսակետը, ըստ էութեան համընդգրկիչ մեթոդաբանութեան մը կիրարկումով, միջուսումնական ուղղութիւններէ ստեղծուած բազմատարերային ու բազմադիմի մօտեցումներու հետ միասին, սկզբնական փաստ մը ընծայեցին՝ տուեալ նիւթին հանգիստ կերպով մօտենալու հնարաւորութիւնը խոչընդոտող արգելքներու - տարբեր բնոյթի ուշացումներու յաղթահարման ճամբուն վրայ:

Թեպէտեւ այս ուղղութեամբ կտրուելիք ճանապարհը տակաւին երկար կը մնայ - թիրախը հեռակայ, - բազմաթիւ հարցերու շուրջ յայտնուած կարծիքներու մերթ նոյնիսկ ուժեղ՝ սպասելի՝ տարբերակումներով հանդերձ, այս գիտաժողովը առիթ հանդիսացաւ - օրինակ ընծայեց լուրջ տրամախօսութեան մը ներկայ հայ, թուրք - այլ տարբեր ազգութիւններու պատկանող գիտնականներուն միջեւ: